

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 32

ՀՀ Լոռու մարզպետի պաշտոնակատարի մոտ կայացած խորհրդակցության

26.11.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Դեմիրճյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում
/Ձեկ. մարզպետի տեղակալ Ա.Հովսեփյան, գլխավոր քարտուղարի տեղակալ, ստորաբաժանումների ղեկավարներ/
2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին
/Ս.Սարուխանյան/
3. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Հովսեփյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին`

Համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման հարցերի վերաբերյալ կազմակերպել համատեղ քննարկումներ համայնքի ղեկավարների հետ և ներկայացնել առաջարկություններ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Մինչև 15.12.2018թ. ներկայացնել ստորաբաժանումների աշխատակիցների 2019թ. արձակուրդների գրաֆիկը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature
X 

Ս.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ